evocaBANK

ՏԵՂԵԿԱՑՈՒՄՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման հետ կապված ռիսկեր.

Բանկը տեղեկացնում է Հաճախորդին այն մասին, որ Արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

- **Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ:** Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության տակ: Նշված պատճառով Արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը (մարժինալ գործարքների դեպքում հնարավոր կորուստները կարող են գերազանցել Հաճախորդի կողմից ներդրած սկզբնական գումարի մեծությունը):
- **Իրացվելիության նվազման ռիսկ:** Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հարթակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:
- **Օրենսդրության փոփոխության ռիսկ:** Այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել կորուստներ:
- **Ենթակառուցվածքային ռիսկ:** Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեության ընդհատումները կարող են բերել Հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ Արժեթղթերի) կորուստների:
- **Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր:** Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, ինտերնետ փրովայդերների հետ կապված պրոբլեմների, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել Հաճախորդի

ակտիվների կորուստներ:

- **Այլ ռիսկեր:** Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

2. Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր.

- Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրինակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն: Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման համար: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության արդյունքում Բանկի և Հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար: